*Ո Ր Ո Շ Ու Մ*
*Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին*

*31.08.2021թ.* *ք. Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Հասմիկ Ալեքսանյանս, ուսումնասիրելով թիվ 00417878 կատարողական վարույթի նյութերը՝*

***Պ Ա Ր Զ Ե Ց Ի***

*Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.06.2015թ. տրված թիվ ԵԿԴ/0456/17/15 կատարողական թերթի համաձայն պետք է Միեր Մանուկյանից հօգուտ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 311.000 ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող տոկոսագումարներ:*

*Բռնագանձումը տարածել գրավի պայմանագրով գրավադրված ոսկյա իրերի վրա:*

*Պահանջատերը գրությամբ հայտնել է, որ պարտապանի պարտավորությունը 20.04.2021թ կազմում է 1.248.737 ՀՀ դրամ:*

*«ՌԱՖՕԼ» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության համաձայն գրավի առարկա հանդիսացող 5 կտոր ոսկյա իրերը գնահատվել են 379.920 ՀՀ դրամ:*

***Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3 և 35.4 հոդվածներով***

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի***

*Պարտապան՝ Միեր Մանուկյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա իրերը*

| *հ/հ* | ***Լոտի անվանումը*** | ***Քանակը*** | ***Հարգ*** | ***Գրամ*** | ***Գնահատման գին ՀՀ դրամով*** | ***Մեկնարկային գինը (75%)ՀՀ դրամով*** |
|---|---|---|---|---|---|---|
| *1* | *մատանի* | *1* | *580* | *3.9* | *62.790* | *47.092,5* |
| *2* | *Մատանի վնասված* | *1* | *560* | *3.3* | *51.480* | *38.610* |
| *3* | *ականջօղ* | *1զույգ* | *580* | *6.1* | *98.210* | *73.657,5* |
| *4* | *ականջօղ* | *1զույգ* | *580* | *7.3* | *117.530* | *88.147,5* |
| *5* | *մատանի* | *1* | *580* | *3.1* | *49.910* | *37.432,5* |

*Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝* ***http//harkadir.ajurd.am*** *միջոցով:*

***Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 20.10.2021թ թվականին:***

*Որոշումը ուղարկել կողմերին:*

*Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:*

Digitally signed by
ALEKSANYAN
HASMIK
6508860747
Date: 2021.09.29
14:24:22 AMT

*«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:*

***ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ***
***ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ ՀԱՍՄԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***

*Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*
*Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնիինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնիինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:*
*«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:*